08.03.2025թ.

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ՝ ՄԱՐՏԻ 8-Ի ԱՌԹԻՎ

Թանկագին կանայք, մայրեր, քույրեր և աղջիկներ

Շնորհավորում եմ ձեզ գարնանային սիրված ու գեղեցիկ տոնի՝ Կանանց միջազգային օրվա առթիվ:

Գարնանամուտն ազդարարվում է մեր կողքին ապրող կանանց մեծարելու, նրանց դերը մեր հասարակության մեջ ևս մեկ անգամ կարևորելու և շեշտադրելու լավագույն հնարավորությամբ:

Հանրային, հասարակական, պետական, համայնքային կյանքի բոլոր ոլորտներում անուրանալի է կանանց դերը, տեսանելի՝ նրանց աշխատանքը:

Կանանց մասնագիտական որակները, համատեղվելով կանացի նրբազգացությանն ու նրբանկատությանը, մայրական հոգատարությանը, ստեղծում են տեսանելի արդյունքներ, որոնց շնորհիվ ունենք հավասարակշիռ հասարակություն և միջավայր:

Այս բարդ ժամանակներում էլ մեծ պատասխանատվությամբ ու պատվախնդրությամբ կանայք դիմակայում են մեր երկրի, համայնքի առջև ծառացած մարտահրավերներին ու միաժամանակ հաջողությամբ հաղթահարում դրանք:

Սիրելի կանայք

Դուք ընտանիքի հոգատար ու սիրագորով մայրեր եք, պատվարժան տանտիկիններ, նվիրված կանայք՝ երաշխավորը ձեր ընտանիքի ամրության ու պահպանության, ձեր զավակների դաստիարակության, լիարժեք քաղաքացիներ դարձնելու գործում:

Այս տոնական պահին ցանկանում եմ առանձնակի շնորհավորել Հայոց բանակում իրենց պարտքը կատարող զինվորների մայրերին: Թող ձեր աչքերը միշտ ժպտան երջանկությունից ու փայլեն հպարտությամբ՝ ձեր զավակների հաջողությունների և բարի լուրերի սպասմամբ:

Ցանկանում եմ իմ երախտիքի ու խոնարհումի խոսքերը հղել այն կանանց, որոնք արցախյան հերոսամարտերում տվել են թանկագինը՝ իրենց զավակներին ու ամուսիններին:

Սիրով շնորհավորում եմ Սևանի բնակիչներ դարձած արցախցի կանանց, մայրերին, քույրերին, մաղթում նրանց հոգու կորով, առողջություն, հավատ և վստահություն ապագայի նկատմամբ:

Սևանը հպարտանում է համայնքում ապրող ու արարող կանանց հաջողություններով ու ձեռքբերումներով, գնահատում նվիրյալ աշխատանքը ու գործունեությունը, որի շնորհիվ մեր համայնքը դառնում է առավել ներկայանալի ու տեսանելի:

Սևան համայնքի հարգարժան մայրեր ու կանայք, աղջիկներ և քույրեր

Հրաշալի տոնի՝ Մարտի 8-ի առթիվ ընդունեք իմ, Սևան համայնքի ղեկավարի աշխատակազմի, բնակավայրերի վարչական ղեկավարների և համայնքի ավագանու ամենաջերմ բարեմաղթանքներն ու շնորհավորանքները:

Մաղթում եմ ձեզ լավատեսություն, առողջություն և արևշատություն, թող ձեր կյանքը իմաստավորվի անձնական և աշխատանքային հաջողություններով, բարձր տրամադրությամբ և դրական զգացողություններով:

Անկախ ժամանակի թելադրած դժվարություններից ու առկա խնդիրներից՝ երբեք չկորցնեք ձեր հոգու և մտքի լույսը, եղեք առողջ ու կենսախինդ:

Ցանկանում եմ ձեզ սեր, երջանկություն, հոգեկան ներդաշնակություն, բարեկեցություն: